ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության արարողակարգի փորձագետի 01.04.2023-30.06.2023 թթ. ժամանակահատվածում աշխատանքային գործունեության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության արարողակարգի փորձագետի կողմից իրականացված աշխատանքների հիմնական ուղղությունները

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներքին արարողակարգային միջոցառումների անցկացման կարգ հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 1831-Ա հրամանը **և Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության փորձագետի աշխատանքների իրականացման ծրագիրը՝** 01.04.2023 – 30.06.2023 թթ. ժամանակահատվածում կատարել եմ արարողակարգային աշխատանքներ՝ հետևյալ ուղղություններով.

1. ՀՀ ԿԳՄՍ նախարարի, նախարարների տեղակալների և վարչությունների պետերի մասնակցությամբ աշխատանքային հանդիպումների, այցերի, նիստերի ընթացքում արարողակարգային աշխատանքների կազմակերպում:

2. Արտագնա և ներքին միջոցառումների ընթացքում անհրաժեշտ պարագաների ապահովում (ՀՀ ԿԳՄՍՆ տարբերանշաններով պաստառ, նոթատետրեր, պայուսակներ, գրիչներ, խմելու ջուր՝ շշերով, բաժակներ, հրավիրատոմսեր, ծաղկեփնջեր):

3. Արտագնա միջոցառումների ժամանակ ՀՀ ԿԳՄՍՆ պաշտոնատար անձանց (նախարար, նախարարի տեղակալներ) դիմավորում, ուղեկցում դեպի միջոցառման անցկացման վայր, արարողակարգային ավագության ապահովում, ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ կազմակերպված միջոցառումների

հրավիրատոմսերի տրամարդում, փոխգործակցություն պետական այլ կառույցների, գերատեսչությունների, կազմակերպությունների և հիմնարկների հետ:

01.04.2023 – 30.06.2023 թթ. ժամանակահատվածում իրականացված աշխատանքների ընդհանուր բնութագիրը

Հաշվետու ժամանակահատվածում արարողակարգային աշխատանքներ են իրականացվել ներքին և արտագնա միջոցառումների ընթացքում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի, նախարարների տեղակալների և վարչության պետերի մասնակցությամբ:

Մասնավորապես, ապրիլի 01-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել եմ ընդհանուր թվով 72՝ արտագնա (9) և ներքին (63) միջոցառումների արարողակարգային աշխատանքներին, որոնց ծավալը կազմել է՝

ապրիլին՝ 25 միջոցառում,
մայիսին՝ 23 միջոցառում,
հունիսին՝ 24 միջոցառում:

Հասարակայնության հետ կապերի
և տեղեկատվության վարչության
արարողակարգի փորձագետ՝ **Արմեն Գրիգորյան**

12.07. 2023 թ.